աղտ համբաւի, Յովհաննէս Յակոբեան՝ իր լուրջ և սուրբ կենցաղովը գործունէութեամբ և առատ բարերարութիւններով, Մարտիրոս Թոքատեան՝ իր փիլիսոփայ կենցաղովն և խորհրդական փորձագիտութեամբ, Կարապետ Եղիազարեան՝ (1) իր մեղմիկ համեստութեամբ և լուռմուռ մշտաղբաղութեամբ՝ երեք մնայո՛ւն և տրա՛մ նախահիմեր թուրքահայ վաճառականութեան ի Մեծն Բրիտանիա։

Մինչ այս պանդուխտ խումբը կազմ ու կայք կառնէր յԱնգղիա կանոնաւոր հաշուընթացներով և օգիսներով, ու անգլիկ գործնական փստածաղիկ բառեր ու ոճեր կը փոխանակէին թուրքական և իտալական հղօ՛ր և հնչո՛ւն բառերու և ոճերու հայ բերաններու մէջ՝ հոս ի Կ. Պոլիս, ներգործութեամբ մանաւանդ այս անգղիաբընակ Հայերուն և հետզհետէ տեղակալող արեւմտեան կրթութեան, մանիֆաթուրայի հայ վաճառատանց մէջ

Գարակէօզեանց՝ բաժնեկից դրամագլուխներով և հաւաքական անունով մը հաստատել ի Լոնտրա մեծ դրամատուն մը, բայց ընդունելութիւն չէ գտեր այս երկու տուներէն, և ինք ալ միայնակ չէ՛ համարձակեր այդպիսի մեծ ձեռնարկութեան մը։ Մահուընէն քիչ ժամանակ առաջ՝ իւր հին աշխատաւոր պաշտօնէից՝ Թէ՛ ի Պոլիս Թէ՛ ի Մանչէսդրը՝ պարգեւեր է մեծագումար դրամանուէրներ (մինչեւ 1500ական Օսմ. ոսկի). և ասոնք բաւական օրինակելի ցոյց մըն է քաջալերութեան միւս մեր վաճառականներուն համար։

(1) Կարապետ Եղիազարեան՝ քեռորդին է անուանի Սենեքերիմ Մանուկեանի (Մանիկեան), որ Կեսարացւոց ի Կ. Պոլիս և յԵրուսաղէմ վաճառականութեանց ուսվիրան եղած է՝ 1840էն սկսելով։ Ինք՝ Սենեքերիմ Մանուկեան՝ այդ ազնի՛ւ մեծարո՛յ ծերունին ալ՝ հաճած է տալ մեզի հայ վաճառականութեան վրայ կարեւոր տեղեկութիւններ, որ պիտի յեռունք գործիս ընթացքին. անյիշատակ թողուլ չենք ուզեր նաև հոս Կ. Եղիազարեանի՝ այդ կեսարացի ժիր ու բարի վաճառականին՝ 1883ին Սաուքորդի մէջ մեզի ըրած ասպնջական պատիւներն և ապա մեր գործին մատուցած դիւրութիւնները։